ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

20 դեկտեմբերի 2011 թվական N 193-Ա

ք.Հրազդան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 108-Ն որոշման 1-ին կետի 6) ենթակետի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին հատկացված գումարների հաշվին գյուղ Ալափարսի կենտրոնական փողոցի հիմնանորոգման աշխատանքների վերջնական ընդունման և հետագա շահագործման նպատակով Ալափարս համայնքին հանձնելու համար՝

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել շինարարական աշխատանքների ընդունող և շահագործման հանձնող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Վ. Բակլաչյան	հանձնաժողովի նախագահ	- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ
Ս. Հակոբյան	անդամ	- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Ս. Սաֆարյան	անդամ	- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
Ժ. Հարությունյան	անդամ	- տեխնիկական հսկողություն իրականացնող «Կոտայք նախագծային և շինմոնտաժային բյուրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Յու. Գրիգորյան	անդամ	- հեղինակային հսկողություն իրականացնող «Տրանսնախագիծ» ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Գ.Հովհաննիսյան	անդամ	- օբյեկտի կապալառու կազմակերպության՝ «Կոտայքի ՃՇՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Վ.Վարդանյան	անդամ	- շահագործման ընդունող Ալափարս համայնքի ներկայացուցիչ (համաձայնությամբ)

2. Հանձնաժողովին՝ տեղերում ուսումնասիրել կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին ու շինարարական նորմերին և համապատասխան ակտը ներկայացնել 10 օրյա ժամկետում:

Գ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ